ԲՅՈՒԼԵՏԵՆ

Հունվար 2024թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Հունվարին գումարվել է Պալատի խորհրդի 3 նիստ՝ 09.01.2024թ.-ին, 15.01.24թ.-ին, 25.01.2024թ.-ին:

09.01.2024թ. նիստի օրակարգում ընդգրկված էին Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունման, Պալատի անդամակցության դադարեցման որոշումների հաստատումը, Պալատի Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովին անդամակցության դադարեցումը՝ դիմումի համաձայն, Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագրի (նոր խմբագրությամբ՝ այդ թվում քննական առարկաների կազմը) և որակավորման քննությունների անցկացման կարգի (նոր խմբագրությամբ) հաստատումը, Պալատի խորհրդի 30.08.22թ N22-Լ և 14.12.23թ N32-Լ որոշումներում փոփոխության հաստատումը:

15.01.24թ. Նիստի օրակարգում ընդգրկված էր Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների վճարների չափի հաստատումը:

Որոշմամբ նախատեսվում է որակավորման քննությունների վճարների չափը նվազեցնել և սահմանել Պալատի խորհրդի 31.03.2021թ. N 17-Լ որոշման հավելվածում նշված չափով:

25.01.2024թ. Նիստի օրակարգում ընդգրկված էին Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունման, Պալատի անդամակցության դադարեցման և Պալատի որակավորման հանձնաժողովի անհատական կազմի համալրման որոշումների հաստատումը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ 10.01.2024թ.-ին և 24.01.2023թ.-ին:

Անդամակցության հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ 17.01.2024թ.-ին: Հանձնաժողովի կողմից Պալատի խորհրդին առաջարկվել է հաստատել Պալատին դիմած 6 անձի անդամակցություն:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

18.01.2024թ.-ին տեղի է ունեցել «Ավելացված արժեքի հարկ» թեմայով դասընթացը: Այն վարում էր Լեռնիկ Հարությունյանը:

26.01.2024թ -ին տեղի է ունեցել «Փողերի լվացման փուլերը և հիմնական մեթոդները» թեմայով դասընթացը: Այն վարում էր Տաթևիկ Կարապետյանը:

30.01.2024թ.-ին տեղի է ունեցել «Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի կիրառում» թեմայով դասընթացը: Այն վարում էր Նաիրուհի Ավետիսյանը:

ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2024թ. հունվարի 17-ից 25-ը տեղի ունեցան Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի քննությունները: Դրանք աննախադեպ էին դիմորդների մասնակցության քանակով. Պալատի պատմության մեջ գրանցվեց ռեկորդային թիվ՝ 555 մասնակից: